



# Our Compass

Ericsson Code of Business Ethics

# Մեր նախագահի և գործադիր տնօրենի ուղերձը

## Մեր նախագահի և գործադիր տնօրենի ուղերձը

Վերջին 150 տարիների ընթացքում մեր հիմնարար սկզբունքները անփոփոխ են մնացել՝ զարգացնել և պահպանել գլոբալ հաղորդակցական ցանցեր, ինչպես նաև ապահով ու հուսալի կերպով միավորել մարդկանց և համայնքները` նպաստելով ավելի կայուն և առաջադեմ աշխարհի կառուցմանը։ Որպեսզի շարունակենք լինել իսկական ոլորտային առաջատար, մենք պետք է լինենք ոչ միայն տեխնոլոգիական առաջատար, այլև առաջատար մեր գործունեության բոլոր ոլորտներում։ Մենք մրցում ենք հաղթելու համար` հետևելով կանոններին և առաջնորդվելով Ericsson ընկերության լավագույն շահերով։

Մենք հանդիպում ենք խիստ մրցակցության ամբողջ աշխարհում։ Հաստատուն աշխատանքի և նորարարության շնորհիվ մենք արժանացել ենք մեր ոլորտի առաջատարի դիրքին։ Հեռահաղորդակցությունը կենսական նշանակություն ունի մեր հասարակության համար այսօր, ուստի մեր աշխատանքը ուղեկցվում է մեր բոլոր շահագրգիռ կողմերի և մեզ համար զգալի պատասխանատվությամբ։ Ինչպես արդեն նշել եմ, ոլորտի առաջատար լինելը պահանջում է ավելին, քան պարզապես գերազանց լուծումներ, այն պահանջում է գործառնական կատարելություն, տարբեր տեսակետների ըմբռնում և էթիկայի ու ազնվության նկատմամբ անշեղ նվիրվածություն։ Մեր լուծումները, ինչպես նաև մեր աշխատելաոճը, ծառայում են առաջընթացին և հանրային բարօրությանը նպաստելուն։

Մեր Բիզնես էթիկայի Կոդեքսը (CoBE) հանդիսանում է հիմնարար սյուն, որը մեզ ուղղորդում և սահմանում է հստակ ակնկալիքներ` ձևավորելով մեր կրպարառտիվ մշակույթը և այն պահանջները, որոնցով մենք իրակառացնում ենք մեր գործունեությունն ու գործավարությունը։ Թոյլ տվեք հստակ նշել` ակնկալում եմ, որ բոլորը կկարդան և լիաժժեք կընկալեն մեր CoBE-ը։ Եթե որևէ դրույթ դժվար է ըմբռնել կամ թվում է անհստակ, խնդրում եմ դիմել ձեր ղեկավարին կամ համապատասխանության պատասխանատուին։ Եվ ամենակարևորը` մեր ընկերությունում տեղ չկա այն անձանց համար, ովքեր CoBE-ը համարում են չափազանց սահմանափակող։

**Գործառնական գերազանցություն և էթիկական որոշումների կայացում**
CoBE-ը հանդիսանում է մեր որոշումների կայացման, ռիսկերի արդյունավետ կառավարման և շահառուների հետ փոխգործակցության հիմնական ուղեցույցը։ Մեր երկարաժամկետ հաջողությունը հիմնված է յուրաքանչյուրիս կարողության վրա` դրսևորելու ճիշտ դատողություն և մշտապես խորհելու մեր գործողությունների, ինչպես նաև դրանց պատճառների և կատարման ձևի մասին։ Որոշումներ կայացնելիս և գործունեություն իրականացրելիս մենք միշտ պետք է գործենք թափանցիկ, ձեռք բերենք բոլոր համապատասխան տվյալները և քննադատաբար վերանայենք մեր ենթադրությունները` փաստերի ու հնարավոր ռիսկերի խորացված գնահատումից հետո` կայացնելով մտածված և էթիկապես ճիշտ որոշումներ։

Շատ հաճախ մեր առջև կանգնած որոշումները միանշանակ չեն լինում։ Մենք կարող ենք հանդիպել դիլեմաների, երբ առկա են մրցակցող ռազմավարական նպատակներ, և որոշումները պահանջում են խորքային վերլուծություն ու մտածված մոտեցում։ Որոշ իրավիճակներում ընդունվող որոշումները կարող են լինել տարակարծություններ և տարաբաժանում առաջացնող։ Մեր CoBE-ը, մեր կառավարման այլ հիմնասյուների հետ միասին, ծառայում է մեզ որպես ուղղորդող և աջակցող գործիք` ճիշտ արդյունքների ապահովման համար։ Ուստի խրախուսում եմ, որ բաց և անկեղծ քննարկումներ ունենաք ձեր ղեկավարների հետ CoBE-ի վերաբերյալ և այն մասին, թե ինչպես

պետք է կիրառվեն դրա սկզբունքները։ Դժվար թեմաների շուրջ ուղղակի խոսակցությունները երբեմն կարող են անհարմար լինել, սակայն դրանք կարևորագույն պայման են խորապես հիմնավորված, տեղեկացված և հարգելի որոշումներ կայացնելու համար։

Երբեմն մեր կայացրած որոշումները կարող են չբերել այն դրական արդյունքները, որոնք մենք ակնկալում ենք, սակայն դա բիզնեսի բնական մասն է։ Եթե որոշումը հիմնավոր, մտածված և արժևորված է եղել, ապա մենք կարող ենք լիովին կանգնել դրա կողքին։ Մենք չենք կարող խոսափել որոշումների կայացումից, սակայն կարող ենք ապահովել, որ դրանք ընդունվեն խստապահանջ, բաց և հիմնավորված ձևով, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանանք պաշտպանել դրանք, անգամ եթե հետագայում իրավիճակը զարգանա ոչ ցանկալի ուղությամբ։

### Առաջնորդություն և հաշվետվողականություն

Առաջնորդներն ունեն առանձնահատուկ դեր մեր կազմակերպության այնպիսի մշակույթի ձևավորման մեջ, որտեղ ազնվությունն ու անբասիր վարքագիծը հիմք են հանդիսանում բոլոր որոշումների և գործողությունների համար։ Մեր ղեկավարների պարտականությունն է խորապես հասկանալ, թե ինչպես է իրագործվում մեր ռազմավարությունը, և ապահովել, որ բոլոր աշխատակիցները գործեն էթիկայի բարձր չափանիշներով, պատասխանատու և գիտակցված կերպով` համահունչ Ericsson-ի առաքելությանը և նպատակներին։

Առաջնորդները պետք է ակտիվորեն ներգրավվեն աշխատակիցների հետ հաղորդակցվելու գործընթացում, բաց լինեն տարբեր գաղափարների ու դիտանկյունների նկատմամբ, ցուցաբերեն հետաքրքրասիրություն և հաշվետվողականություն` հասկանալու, թե ինչպես են իրականացվում բիզնեսի նպատակներն ու ցուցանիշները, և ձևավորեն աշխատանքային միջավայր, որտեղ ազնվությունն ու սկզբունքայնությունը ուղղորդում են յուրաքանչյուր որոշում։ Մենք չենք ձգտում հաղթել ցանկացած գնով` մենք հաղթում ենք ճիշտ ձևով և չենք խախտում սկզբունքները։

**Գործել ազնվությամբ, բարձրացնել և լուծել մտահոգությունները**
Մեր նվիրվածությունը էթիկային և ազնվությանը կազմում է մեր բիզնեսի հիմնասյունը և առանց դրա դժվար կլինի հաջող և վստահելի գործունեություն ծավալելը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահառուների հետ։ Յուրաքանչյուր մեզանից պարտավոր է բարեխղճորեն բարձրացնել CoBE-ի հնարավոր խախտումների մասին մտահոգությունները` օգտագործելով մեր Համապատասխանության Փիժը (Compliance Line) : Այք փակելը, խնդիրն անուետելը կամ կարծել, թե «սա ուրիշի խնդիրն է», խիստ անընդունելի է, եթե կան կասկածներ անհարիր կամ ոչ պատշաճ վարքի առնչությամբ։ Միայն մեկ «վատ օրինակ» կարող է լուրջ խնդիրներ ստեղծել, որոնք կազդեն մեզանից յուրաքանչյուրի վրա։

Երբ բարձրացվում են մտահոգություններ, փորձառու թիմը համապատասխան կերպով գնահատում և հետաքննում է դրանք։ Մենք երբեք չենք հանդուրժի, և չենք կարող հանդուրժել, որ տեղի ունենա ոչ պատշաճ վարքագիծ։ Մենք պատասխանատվության կհանձնենք խախտումների համար մեղավոր անձանց` կիրառելով համապատասխան կարգապահական միջոցներ, այդ թվում` աշխատանքից ազատում։ Մեր նվիրվածությունն ուժեղ է; 2024 թվականին հետաքննությունների արդյունքում, որոնք վերաբերում էին աշխատակիցների վարքագծին, մենք ազատել ենք 82 անձի աշխատանքից։

Մենք բարձր սպասելիքներ ունենք Ericsson-ի բոլոր աշխատակիցների նկատմամբ և կոչտ միջոցներ ենք ձեռնարկում ոչ պատշաճ վարքի դեպքում, քանի որ ազնվությունն ու պրոֆեսիոնալիզմը մեր աշխատանքային և գործառնական ընթացքի հիմնական արժեքներն են։

Այնուամենայնիվ, մտահոգությունները բարձրաձայնելը միայն Համապատասխանության Փիժին հաղորդելը չէ։ Յուրաքանչյուրը մեզանից, երբ նկատում է ռիսկեր, ունի տեղեկատվություն, որը կարող է օգնել որոշումների կայացմանը, կամ նկատում է հնարավոր ոչ պատշաճ վարք, պարտավոր է բաց խոսել այդ մասին և կառուցողական կերպով լուծել խնդիրները միասին։ Միմյանց հետ խոսակցությունները, խնդիրների քննարկումը և համատեղ լուծումներ գտնելը կենսական նշանակություն ունի առողջ կազմակերպության համար։ Շնորհակալություն ձեզ` այս պատասխանատվությունը լրջորեն ընկալելու համար։

### Մեր ապագան

Իրական ոլորտային առաջատար լինելը կախված է այն բանից, թե ինչ ենք անում և ինչպես ենք դա անում։ Դարավոր հաջողության համար մենք պետք է շարունակենք առաջնորդել ազնվությամբ` ձևավորելով հետաքրքիր և դրական ապագա։ Ինչպես արդեն նշել եմ, փոփոխությունն է միակ մշտական տարրը։ Մեր էթիկական հիմքը թույլ է տալիս մեզ առաջնորդ լինել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արհեստական բանականությունը (AI), ամպային տեխնոլոգիաները և հաջողդ սերնդի ցանցերը` պատասխանատու նորարարություն իրականացնելով, վստահություն շահելով և երկարաժամկետ արժեք ստեղծելով։ Երբ մենք ընդունում ենք այս փոփոխությունները և «խաղը փոխում», մենք միշտ կմնանք մեր արժեքների, պարտավորությունների և առաջնորդության սկզբունքների հավատարիմ, և մեր CoBE-ն շարունակում է ուղղորդել մեզ ամեն ինչում, ինչ անում ենք։ Աշխատենք միասին, հաղորդակցվենք բաց, քննադատաբար մտածենք և վճռականորեն գործենք, որպեսզի մեր գործողությունները համապատասխանի մեր արժեքներին և լինի Ericsson-ի լավագույն շահերին ծառայող։

Յուրաքանչյուրը պարտավոր է պահել ազնվության մեր արժեքը, ընդունել CoBE-ը և կայացնել էթիկապես ճիշտ որոշումներ։ Որպես մեր նվիրվածության արտացոլում` ես, Գործադիր թիմի յուրաքանչյուր անդամ և Մեր Տնօրենների խորհուրդը, տարին մեկ անգամ ստորագրում ենք CoBE-ը, ինչպես նաև խնդրում ենք, որ դա անեն ձեզանից յուրաքանչյուրը։

Ամեն մի գործողություն, լինի դա փոքր թե մեծ, որը մենք իրականացնում ենք ամեն օր, կառուցում է մեր մշակույթը` ստեղծելով դիմացկուն, ապագայի վրա կենտրոնացած և ոլորտի առաջատար կազմակերպություն։ Շնորհակալություն ձեր նվիրվածության և աջակցության համար Ericsson-ի նպատակների իրականացման գործում։


### Շարունակենք առաջ շարժվել միասին։

Börsje
Նախագահ և գործադիր տնօրեն
2025 թվականի նոյեմբերի 12-ին





# Առաջնորդվեք մեր կողմնացույցով



Մեր կողմնացույցը էրիկստոնի բարոյական սկզբունքների և ակնկալիքների Ձեր ուղեցույցն է: Այն համահունչ է պրոֆեսիոնալիզմի, հարգանքի և հաստատակամության մեր արժեքներին, որը մեզ հնարավորություն է տալիս առաջնորդվել ազնվությամբ: Հաճախ անդրադառնալով դրան՝ դուք կարող եք վստահ լինել, որ ձեր գործողություններն ու որոշումները համապատասխանում են Բիզնես էթիկայի էրիկստոնի պահանջներին:



# Ericsson-ի անունից հանդես գալուց՝ միշտ հիշեք 3 կետերը

## P<sup>1</sup> Ո՞րն է իմ գործողության նպատակը:

- Այս գործողության համար կա՞ օրինական բիզնես պատճառ:
- Արդյո՞ք գործողությունը բխում է Ericsson-ի շահերից:
- Ի՞նչ ռիսկեր կարող է ունենալ այս գործողությունը: Ինչպե՞ս կարող եմ դրանք մեղմացնել:

## P<sup>2</sup> Ի՞նչ սկզբունքներով պետք է առաջնորդվեն իմ գործողությունները:

- Արդյո՞ք այս գործողությունը օրինական է, և արդյո՞ք այն համապատասխանում է մեր Compass-ի և steering documents-ի:
- Արդյո՞ք գործողությունը էթիկական է և համահունչ է մեր արժեքներին:

## P<sup>3</sup> Ինչպե՞ս կընկալվի իմ գործողությունը:

- Ինչպիսի՞ն կլինեն իմ գործողությունը, եթե այն հայտնվեր լուրերում:
- Արդյո՞ք իմ գործողությունը բացասաբար կանդրադառնա Ericsson-ի հեղինակության վրա:

## Բովանդակությունը

### ● Our Code, Our Compass

1.1	Եղեք տեղեկացված Ericsson-ի էթիկական պահանջների մասին	07
1.2	Իմացեք ձեր պարտականությունները Ericsson-ում աշխատելիս	08
1.3	Բարձրացրեք էթիկայի և համապատասխանության հարցերը	09

### ● Մեր աշխատակիցները և աշխատավայրը

2.1	Վերաբերվեք բոլորին հարգանքով, ներառականորեն և արժանապատվորեն:	11
2.2	Ապահովել արդար և բարենպաստ աշխատանքային պայմաններ և հարգել արհմիությունների իրավունքները	12
2.3	Ապահովեք առողջություն, անվտանգություն և բարեկեցություն	13
2.4	Արգելել և կանխել հարկադիր աշխատանքը, մարդկանց թրաֆիքինգը և երեխաների աշխատելը	14

### ● Մեր բիզնեսը, Հաճախորդները և մատակարարները

3.1	Բիզնես վարել բարեխղճորեն և կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականությամբ	16
3.2	Գործեք Ericsson-ի շահերից ելնելով	17
3.3	Մրցակցեք մեր տեխնոլոգիաների և առաջարկների արժանիքների հիման վրա	18
3.4	Համագործակցեք միայն այն երրորդ անձանց հետ, ովքեր կիսում են մեր նվիրվածությունը ազնվությանը:	19
3.5	Հարգեք միջազգային առևտրի և փողերի լվացման դեմ պայքարի օրենքները	20

### ● Մեր ակտիվները և մտավոր սեփականությունը

4.1	Պաշտպանեք գաղտնի տեղեկատվությունը և մտավոր սեփականությունը	22
4.2	Օգտագործեք ընկերության տեղեկատվությունը և ակտիվները պատասխանատու կերպով	23
4.3	Պաշտպանեք անձնական տվյալները	24
4.4	Պահպանեք պատշաճ ֆինանսական վերահսկողություն և կանխեք խարդախությունները	25
4.5	Շփվեք պատասխանատու կերպով	26

### ● Մեր սոցիալական և բնապահպանական ներգրավվածությունը

5.1	Խրախուսել գաղտնիության և խոսքի ազատության իրավունքը	28
5.2	Պահպանեք մեր հանձնառությունը շրջակա միջավայրի կայունությանը	29
5.3	Հզորացնել և աջակցել տեղական համայնքներին	30



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Our Code, Our Compass

Մենք միշտ ձգտում ենք մեր բիզնեսը վարել բարոյապես պատշաճ և պատասխանատու կերպով

# 01

1.1	Եղեք տեղեկացված Ericsson-ի էթիկական պահանջների մասին	07
1.2	Իմացեք ձեր պարտականությունները Ericsson-ում աշխատելիս	08
1.3	Բարձրացրեք էթիկայի և համապատասխանության հարցերը	09



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Եղեք տեղեկացված Ericsson-ի էթիկական պահանջների մասին

## Մեր Compass-ը սահմանում է մեր ընկերության ակնկալիքները, թե ինչպես ենք մենք բիզնես վարում:

The Code of Business Ethics-ը մեր Compass-ն և Ericsson-ի կորպորատիվ կառավարման հիմնական սյուներից մեկը: Compass-ն օգնում է մեզ վարել մեր բիզնեսը պրոֆեսիոնալ, հարգալից և բարեխղճորեն:

Compass-ը վերաբերում է ոչ միայն Ericsson-ի հիմնական աշխատակիցներին, այլ նաև ցանկացած անձի, ում նկատմամբ Ericsson-ը վերահսկում է առօրյա աշխատանքը և բոլոր կազմակերպությունների տնօրենների խորհրդի անդամներին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են Ericsson-ի կողմից: Մենք պահանջում ենք, որ Ericsson-ի հետ աշխատող երրորդ կողմերը հավատարիմ մնան մեր Compass-ում պարունակվող արժեքներին՝ պահպանելով մեր Code of Conduct for Business Partners-ի կանոնները:


Մենք պատասխանատու ենք բոլոր կիրառելի օրենքների և կանոնակարգերի համապատասխանության համար: Բացի այդ, մենք պարտավոր ենք հավատարիմ մնալ մեր Compass-ին և Ericsson steering փաստաթղթերին, որոնք կիրառելի են մեզ համար՝ հիմնված մեր աշխարհագրության, աշխատանքի դերի կամ այն գործունեության վրա, որը մենք իրականացնում ենք: Այս փաստաթղթում պարունակվող ցանկացած համապատասխանության պահանջ մեր Compass-ին միշտ ներառում է կիրառելի steering փաստաթղթերի համապատասխանության պահանջ: Ի վերջո, եթե մեր Compass-ի պահանջներից որևէ մեկը տարբերվում է իրավական պահանջներից, դուք միշտ պետք է կիրառեք ավելի խիստ ստանդարտը:

Մենք օգտագործում ենք տեխնոլոգիաները, այդ թվում նաև արհեստական ինտելեկտը, պատասխանատու, արդար և էթիկական ձևով: Սա ներառում է կենտրոնացում մարդկային վերահսկողության վրա՝ ապահովելու անվտանգությունը, ներառականությունը, թափանցիկությունը, տվյալների գաղտնիությունը, հաշվետվողականությունը և ընդհանուր հասարակական և բնապահպանական բարեկեցությունը: Մեր Compass-ի խախտումները կարող են հանգեցնել կարգապահական

պատասխանատվության՝ ներառյալ աշխատանքի դադարեցում՝ անկախ ընկերությունում ձեր դիրքից: Միևնույն ժամանակ, մենք հասկանում ենք, որ մարդիկ երբեմն ազնիվ սխալներ են գործում՝ չնայած լավ մտադրություններին: Եթե դա տեղի ունենա, կամ եթե ունեք հարց կամ մտահոգություն, եղեք հաշվետու, թափանցիկ և բարձրաձայնեք:

Են People Function-ը կամ Group Function Legal Affairs & Compliance-ը: Օրինակ Compliance գրասենյակը, [Compliance Consultation Desk-ը](#) և [Ethics & Compliance Portal-ը](#) առաջարկում են խորհուրդներ և համապատասխան հաստատումներ էթիկայի և համապատասխանության հարցերի վերաբերյալ:

Եթե վստահ չեք, թե ինչպես են մեր steering փաստաթղթերը վերաբերում ձեզ, խորհրդատվության համար դիմեք մեր անմիջական ղեկավարին: Կարող եք նաև դիմել համապատասխան գործառնություններին, ինչպիսիք



### Learn more

### Useful links

- [Our company story](#)
- [Ericsson on the Move](#)
- [Atlas - Assistant to support questions on EGMS](#)

### CoBE Relevant Documents:

- [See section 1.1. of CoBE Relevant Documents](#)



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Ինչպե՞ք ձեր պարտականությունները Ericsson-ում աշխատելիս

## Մենք միշտ գործում ենք ազնվությամբ:

Մեր նպատակներին և արժեքներին համապատասխան, մենք պետք է գործենք պատասխանատու, ազնիվ և անկաշառ, երբ բիզնես ենք վարում որպես Ericsson-ի ներկայացուցիչներ, անկախ նրանից, թե ինչ դեր ենք զբաղեցնում: Սա նշանակում է, որ մենք պետք է միշտ ազնիվ գործենք, նույնիսկ եթե դա նշանակում է կորցնել բիզնես հնարավորություն: Բացի այդ, ազնվությամբ գործելու պարտավորությունը մեզանից յուրաքանչյուրին պահանջում է բարձրաձայնել համապատասխանության վերաբերյալ մտահոգություն, եթե մեզանից որևէ մեկը գիտի կամ կասկածում է օրենքի, մեր Compass-ի կամ steering փաստաթղթերի խախտումների մասին կամ ունի որևէ այլ տեղեկություն, որը կարող է վնասել Ericsson-ին կամ նրա հեղինակությունը վտանգի տակ է:

Երբ պահանջվում է, դուք պետք է լիովին համագործակցեք Ericsson-ի կամ օրինական երրորդ կողմի կողմից իրականացվող ցանկացած հետաքննության, աուդիտի կամ գնահատման մեջ, ներառյալ աշխատանքի հետ կապված տվյալների, գրառումների կամ հաղորդագրությունների հասանելիության ապահովումը և երբեք չոչնչացնեք կամ չփոխեք դրանք, որտեղ էլ որ լինեն:

Եվ եթե դուք մենեջեր եք, գործադիր թիմի անդամ կամ խորհրդի անդամ, դուք ունեք հատկապես կարևոր դեր՝ դուք պատասխանատու եք ազնվության և համապատասխանության մշակույթի ձևավորման համար:

## Ղեկավարները և գծային ղեկավարները պետք է՝

- Խրախուսեք և աջակցեք թիմի անդամներին հարցեր տալ և խոսեք նրանց հետ դժվար էթիկական իրավիճակների մասին
- Համոզվեք, որ թիմի անդամները պատշաճ պատրաստվածություն ունեն և գիտեն, թե ինչպես պետք է համապատասխանեն մեր Compass-ին և steering փաստաթղթերին
- Խուսափեք թիմերի վրա ճնշում գործադրելուց՝ վտանգելով անուղղակիորեն խրախուսել ոչ էթիկական վարքագիծը կամ մեր steering փաստաթղթերը խախտելը
- Հաղորդեք հնարավոր խախտումների մասին և աջակցեք թիմի անդամներին, երբ նրանք մտահոգություններ են հայտնում



### Learn more

### Useful links

- [Compliance @ Ericsson](#)

### CoBE Relevant Documents:

- [See section 1.2. of CoBE Relevant Documents](#)



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Բարձրացրեք էթիկայի և համապատասխանության հարցերը

## Մենք բոլորս պետք է բարձրաձայնենք, եթե ինչ-որ բան այնպես չէ:

### Եթե ինչ-որ բան սխալ է թվում:

- Խոսեք ձեր գծային մենեջերի կամ ձեր մենեջերի ղեկավարի հետ
- Խոսեք People Function կամ Group Function Legal Affairs և Compliance-ի, կամ
- Կապվեք [Ericsson Compliance Line](#)-ի հետ: (Ericsson Compliance Line-ն օգտագործելիս կարող եք անանուն մնալ, եթե դա թույլատրվում է տեղական օրենսդրությամբ:)

[Ericsson Compliance Line](#)-ը հյուրընկալվում է անկախ երրորդ կողմի կողմից, որը վարում է բոլոր հաշվետվությունները ապահով և գաղտնի: Այն հասանելի է 24/7 բոլոր ներքին և արտաքին շահագրգիռ կողմերին ավելի քան 60 լեզուներով:

Մենք պետք է բարձրաձայնենք, երբ տեսնում կամ կասկածում ենք մեր Compass-ի խախտումները: Չխոսելը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Ձեր մտահոգությունները կգնահատվեն բողոքների բաժնի կողմից, որը կարող է լրացուցիչ հարցեր տալ: Դրանք կարող են հետաքննվել Corporate & Government Investigations-ի կողմից կամ կարգավորվել այլ համապատասխան ստորաբաժանումների կողմից:

Դուք պաշտպանված կլինեք վրեժխնդրությունից, երբ բարեխղճորեն բարձրացնեք

համապատասխանության իրական մտահոգությունը. մենք չենք հանդուրժում վրեժխնդրությունը որևէ ձևով:

Եթե դուք գծային մենեջեր եք կամ վստահելի այլ անձ, և ինչ-որ մեկը ձեզ հայտնում է մտահոգություն համապատասխանության վերաբերյալ, դուք պետք է այդ մասին զեկուցեք Group Function Legal Affairs & Compliance-ին կամ [Ericsson Compliance Line](#)-ին: Թեև կարող է անհրաժեշտ լինել խոսել զեկուցող անձի հետ՝ ավելի լավ հասկանալու համար նրա մտահոգության բնույթը նախքան զեկուցելը, կարևոր է, որ չփորձեք իրականացնել ձեր սեփական հետաքննությունը, քանի որ կարող են ներառվել բարդ իրավական խնդիրներ:

Դեկլարները պետք է իրենց լիազորված զգան որոշ հարցեր լուծելու համար, ինչպիսիք են կատարողականի խնդիրները և գործընթացների չկատարումը, բայց պետք է մտահոգություններ բարձրացնեն բիզնես էթիկայի պահանջանք և չարաշահման վերաբերյալ:

Դուք միշտ իրավունք ունեք մտահոգություններ հայտնելու ձեր արհմիության կամ աշխատանքային խորհրդի ներկայացուցիչների հետ, բայց դուք պետք է նաև զեկուցեք մեր Compass-ի հնարավոր խախտումների մասին Ericsson-ի համապատասխան ուղիներով:

Ձեզանից չի պահանջվում հրաժարվել իրավական գործընթացին մասնակցելու ձեր իրավունքներից, երբ հաշվետվություն եք կազմում: Եթե Ericsson-ի ավիբներով հաղորդեք համապատասխանության հետ կապված խնդիրների մասին, ձեզանից չի պահանջվի ստորագրել չբացահայտման մասին համաձայնագիր:



### Learn more

#### Useful links

- [Reporting Compliance Concerns](#)

#### CoBE Relevant Documents:

- [See section 1.3. of CoBE Relevant Documents](#)



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Մեր աշխատակիցները և աշխատավայրը

Դուք կարող եք օգտագործել ձեր ողջ ներուժը և առաջադիմել ներառական և աջակցող աշխատավայրում: Մենք հարգում ենք յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը և աշխատում ենք միջազգայնորեն ճանաչված մարդու և աշխատանքային բոլոր իրավունքներին համապատասխան, այդ թվում` the International Bill of Human Rights and the International Labor Organization’s Declaration on Fundamental Principles և Rights at Work-ի համապատասխան:

# 02

2.1	Վերաբերվեք բոլորին հարգանքով, ներառականորեն և արժանապատվորեն:	11
2.2	Ապահովել արդար և բարենպաստ աշխատանքային պայմաններ և հարգել արհմիությունների իրավունքները	12
2.3	Ապահովեք առողջություն, անվտանգություն և բարեկեցություն	13
2.4	Արգելել և կանխել հարկադիր աշխատանքը, մարդկանց թրաֆիքինգը և երեխաների աշխատելը	14



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Վերաբերվեք բոլորին հարգանքով, ներառականորեն և արժանապատվորեն:

## Մենք խրախուսում ենք հարգանքի վրա հիմնված աջակցող աշխատանքային միջավայր:

Մեր գործընկերներին հարգանքով, արժանապատվությամբ և ներառականությամբ վերաբերվելը բոլորի մեջ լավագույնն է ցույց տալիս, և դա ճիշտ է: Ericsson-ում մեր աշխատակիցների հոգեբանական անվտանգության ապահովումը առաջնային նշանակություն ունի, և որևէ մեկի նկատմամբ ոտնձգությունների, սպառնալիքների, ահաբեկման կամ բռնության տեղ չկա:

Մենք չենք հանդուրժում ոտնձգության, խտրականության, հաշվեհարդարի, սպառնալիքների կամ բռնության որևէ ձև, ներառյալ՝

- Ֆիզիկական, բանավոր կամ գրավոր ոտնձգություն՝ ուղղված աշխատողների կամ գործունեության որևէ երրորդ կողմի (լինի դա գրասենյակում, գրասենյակից դուրս կամ առցանց)
- Ահաբեկում, սպառնում, թշնամանք, նվաստացում, խտրականություն կամ հոգեբանական վատ վերաբերմունք
- Վիրավորական կամ նվաստացնող արտահայտություններ, կատակներ, պատկերներ կամ անվանումներ
- Անցանկալի ուշադրություն կամ ֆիզիկական շփում կամ այլ ներխուժումներ՝ անձնական կյանք և անձնական տարածք

- Վարքագիծ, որը ուղղված է խանգարելու կամ կանխելու բնականոն աշխատանքային գործունեությունը

Մենք գիտենք, որ բազմազանությունը մեզ ավելի ուժեղ է դարձնում որպես ընկերություն: Բազմազան և ներառական աշխատավայր ունենալն օգնում է մեզ ներգրավել լավագույն տաղանդները ամբողջ աշխարհից, խթանել նորարարությունը և ավելի մեծ արժեք բերել մեր հաճախորդներին: Մենք ցանկանում ենք, որ յուրաքանչյուրն իրեն գնահատված և ներառված զգա:

Մենք բոլորս պետք է նպաստենք, որպեսզի Ericsson-ը լինի մի վայր, որտեղ յուրաքանչյուրը կարող է զարգանալ և իրեն հզոր զգալ՝ անկախ այնպիսի գործոններից, ինչպիսիք են նրանց անձնական ծագումը, ճանաչողական հեռանկարները կամ հաշմանդամությունը:

### Բոլորին վերաբերվեք հարգանքով, ներառականությամբ և արժանապատվորեն:

- Հավաքագրեք, պարզևատրեք և առաջ մղեք մարդկանց՝ հիմնվելով արժանիքների վրա
- Կանխել նեպոտիզմը կամ խտրական գործելակերպը
- Խուսափեք ցանկացած պահվածքից, որը կարող է ստիպել աշխատողին իրեն բացառված կամ անցանկալի զգալ: Սա վերաբերում է աշխատանքային ժամերին կամ դրանից դուրս, Ericsson-ի տարածքում կամ դրսում, ինչպես նաև արտաքին միջոցառումների կամ գործուղումների ժամանակ:



### Learn more

#### CoBE Relevant Documents:

- [See section 2.1. of CoBE Relevant Documents](#)
- Check with local People function for local steering documents

- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

Learn more

Useful links

- [Business and Human Rights Statement](#)
- [Respect for human rights](#)

CoBE Relevant Documents:

- [See section 2.2. of CoBE Relevant Documents](#)
- Check with local People function for local steering documents

# Ապահովել արդար և բարենպաստ աշխատանքային պայմաններ և հարգել արհմիությունների իրավունքները

Մենք պաշտպանում ենք յուրաքանչյուր մարդու արդար, անվտանգ և բարենպաստ աշխատանքային պայմանների, ինչպես նաև արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքը:

Սա ներառում է՝

- Ձեզ հասկանալի լեզվով գրավոր փաստաթղթի ստացում, որը ներկայացնում է ձեր աշխատանքի հիմնական դրույթներն ու պայմանները
- Արդար և ողջամիտ աշխատավարձ, ինչպես նաև պայմաններ, որոնք առնվազն ներառում են կենսապահովման վճարներ
- Համարժեք հանգիստ և ժամանց՝ ապահովելով բալանս աշխատանքի և անձնական կյանքի միջև, ներառյալ աշխատանքային ժամերը՝ միջազգային չափանիշներին համապատասխան
- Անկախ արհմիությունների ստեղծում կամ դրանց անդամակցում, ինչպես նաև կոլեկտիվ բանակցությունների վարում:

Դուք պետք է հարգեք բոլոր գործընկերների միավորման ազատությունը և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքը և անօրինական կերպով չսահմանափակեք այդ իրավունքները: Ձեզ չի թույլատրվում որևէ մեկին այլ կերպ վերաբերվել՝ կախված արհմիությանը կամ նմանատիպ կազմակերպությանը միանալու կամ չանդամակցելու նրանց ընտրությունից, և արհմիության ներկայացուցիչները պետք է կարողանան արդյունավետ շփվել աշխատողների հետ:



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

Learn more

Useful links

- [Health, safety and well-being](#)

CoBE Relevant Documents:

- [See section 2.3. of CoBE Relevant Documents](#)


# Ապահովեք առողջություն, անվտանգություն և բարեկեցություն

Մենք աշխատում ենք միասին՝ ապահովելու անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր բոլորի համար:

Դու պետք է՝

- Միշտ աշխատեք պատասխանատու և ապահով, օգտագործեք ճիշտ գործիքներ և անձնական պաշտպանիչ սարքավորումներ, անցեք հանձնարարված անվտանգության ուսուցումը և հետևեք առողջության և անվտանգության կանոններին (ներառյալ կյանքի փրկության կանոնները)՝ համոզվելու համար, որ մեր աշխատակիցներին կամ մատակարարներին ոչ մի վնաս չի հասցվի :
- Ակտիվորեն օգնեք ստեղծել այնպիսի միջավայր, որը նպաստում է բոլորի առողջությանը, անվտանգությանը և բարեկեցությանը
- Բացահայտել, բարձրացնել և նվազեցնել առողջության և անվտանգության ռիսկերը
- Խթանել հոգեբանորեն անվտանգ խոսքի մշակույթ, որտեղ յուրաքանչյուրը կարող է զեկուցել անվտանգության և բարեկեցության համար խոչընդոտ հանդիսացող գործոնների մասին

- Կանխեք հոգեցնցիալական ռիսկերը և աշխատանքի վատ ձևավորումը՝ նպաստելով առողջ ծանրաբեռնվածությանն ու դերերի հստակությունը և խուսափեք հակասական պահանջներից
- Չաշխատել ակոհիոլի կամ ապօրինի նյութերի ազդեցության տակ
- Չաշխատել դեղորայքի ազդեցության տակ, եթե դա կարող է վտանգել որևէ մեկի առողջությունը կամ անվտանգությունը
- Հաղորդեք առողջության և անվտանգության ցանկացած միջադեպի մասին [Global Incident Reporting Tool](#)-ի միջոցով՝ կրկնությունները կանխելու համար
- Խոսեք և դադարեցրեք աշխատել, եթե մտահոգված եք ձեր կամ ձեր գործընկերոջ կամ մատակարարի առողջության, անվտանգության կամ բարեկեցության համար: Եթե իրավիճակը չի շտկվել, դուք պետք է կապվեք ձեր գծային ղեկավարի կամ աշխատանքի առողջության և անվտանգության տեղական ներկայացուցչի հետ և խնդրի մասին զեկուցեք [Global Incident Reporting Tool](#)-ի միջոցով:



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

Learn more

Useful links

- [Business and Human Rights Statement](#)
- [Respect for human rights](#)

CoBE Relevant Documents:

- [See section 2.4. of CoBE Relevant Documents](#)

# Արգելել և կանխել հարկադիր աշխատանքը, մարդկանց թրաֆիքինգը և երեխաների աշխատելը

Մենք աշխատում ենք այստեղ, քանի որ ազատ ընտրություն ենք կատարել և մենք աջակցում ենք երեխաների իրավունքներին:

Ericsson-ում խստիվ արգելվում է ստրկության մեջ շահագործման ցանկացած ձև՝ ներառյալ մարդկանց թրաֆիքինգը, ստիպված կամ հարկադրված աշխատանքը: Ericsson-ի համար կատարվող բոլոր աշխատանքները պետք է լինեն կամավոր, համաձայնությամբ և զերծ հարկադրանքից կամ սպառնալիքներից: Մենք բոլորս իրավունք ունենք նախնական ծանուցումից հետո հրաժարվել աշխատանքից կամ նշանակումից՝ գործող օրենսդրության համաձայն: Դուք երբեք չպետք է ընդունեք որևէ պահանջ՝ Ericsson-ում կամ կադրերի բաժնում դրամական ավանդներ թողնելու կամ անձը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ:

Ձեզ արգելվում է ձեռք բերել ձեր կամ այլոց համար կամ թույլ տալ, որ ուրիշները ձեզ համար սեռական ծառայություններ կամ սեռական բնույթի այլ ծառայություններ ձեռք բերեն ընկերության կողմից հովանավորվող ուղևորությունների ընթացքում կամ ընկերության գործունեության հետ կապված՝ անկախ տեղական օրենսդրությունից:

Մենք կտրականապես արգելում ենք երեխաների աշխատանքը և կիրառում ենք նախագրուշական սկզբունքներ՝ մեր գործունեության ընթացքում երեխաներին վնաս պատճառելուց խուսափելու համար: Աշխատանքի ընդունման գործընթացում անհատի տարիքը պետք է ստուգվի և փաստաթղթավորվի՝ հասկանալու համար, որ նրանք համապատասխանում են աշխատանքային տարիքին:



### Հարկադիր աշխատանքի առկայություն

Հարկադիր աշխատանքը տարածված է համաշխարհային մասշտաբով և առկա է բազմաթիվ արդյունաբերություններում: Դուք պետք է հատկապես հաշվի առնեք այս ռիսկը միզրանտ աշխատողներին վարձելիս, աշխատանքային բրոքերներ օգտագործելիս կամ ժամանակավոր աշխատուժ օգտագործելիս: Դուք չպետք է պահանջեք, որ պոտենցիալ աշխատակիցները վճարեն հավաքագրման վճարներ կամ ծառայության հետ կապված այլ ծախսեր: Ericsson-ը հավատարիմ է “գործատուն է վճարում” սկզբունքին և կփոխհատուցի աշխատողի կողմից կատարված ցանկացած ծախս՝ աշխատանքի ընդունման ժամանակ :



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Մեր բիզնեսը, Հաճախորդները և մատակարարները

Մենք ձգտում ենք բիզնես վարել բարեխղճորեն և թափանցիկ և լինել պատասխանատու կորպորատիվ քաղաքացի:

# 03

3.1	Բիզնես վարել բարեխղճորեն և կոռուպցիայի նկատմամբ գրոյական հանդուրժողականությամբ	16
3.2	Գործք Ericsson-ի շահերից ելնելով	17
3.3	Մրցակցեք մեր տեխնոլոգիաների և առաջարկների արժանիքների հիման վրա	19
3.4	Համագործակցեք միայն այն երրորդ անձանց հետ, ովքեր կիսում են մեր նվիրվածությունը ազնվությանը:	19
3.5	Հարգեք միջազգային առևտրի և փողերի վացման դեմ պայքարի օրենքները	20



- Մեր վարքականոնը
- Մեր մարդիկ
- Մեր բիզնեսը
- Մեր ակտիվները
- Մեր ներգրավվածությունը

# Բիզնես վարել բարեխղճորեն և կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականությամբ

## Մենք չենք օգտագործում ոչ պատշաճ ազդեցություն՝ բիզնես շահելու համար:

Ericsson - ում մենք երբեք չենք ձգտում ոչ պատշաճ կերպով ազդել որևէ մեկի գործողությունների վրա: Պետական պաշտոնյային, գործընկերոջը, հաճախորդին կամ այլ երրորդ անձին որևէ օգուտ առաջարկելը կամ տալը, որպես անտեղի առավելություն ստանալու միջոց, կոչվում է կաշառք, և դա խստով արգելվում է: Դուք նույնպես չպետք է պահանջեք կամ ընդունեք որևէ նման օգուտ որևէ մեկից:

Մենք հանդուրժողականություն չունենք կաշառակերության կամ կոռուպցիայի որևէ ձևի նկատմամբ: Բացի այդ, Ericsson-ը ուղղակի կամ անուղղակի ներդրումներ չի կատարի քաղաքական կուսակցություններին կամ անհատ քաղաքական գործիչներին, բացառությամբ տեղական օրենսդրությամբ թույլատրված աշխատողների կամավոր ներդրումների աջակցության և հանրային հաշվետվությունների մասին դրույթներով:

Դուք միշտ պետք է ապահովեք, որ նվերները, զվարճանքները, հյուրընկալությունը, հովանավորությունները, նվիրատվությունները և աշխատանքի հնարավորությունները համապատասխանեն մեր steering փաստաթղթերին և օրենքին: Ահա պարտադիր պահանջների օրինակներ, որոնք նախատեսված են օգնելու գործել օրինական և օրենսդրության պահանջներին համապատասխան՝

- Երբեք ֆիզիկական անձանց մի տրամադրեք անձնական արտոնություններ, ինչպիսիք են կանխիկ դրամը, համարժեքները, վարկերը, արձակուրդները կամ նմանատիպ արտոնությունները
- Ուշադիր եղեք պետական ծառայողներին (կամ նրանց ընտանիքի անդամներին) ինչ-որ բան տրամադրելիս և հիշեք, որ կիրառվում են նախնական հաստատումներ և ավելի խիստ կանոններ
- Ձեռք բերեք անհրաժեշտ նախնական հաստատումները և փաստաթղթավորեք դրանք
- Երբեք մի կատարեք անպատշաճ վճարում՝ արագացնելու կամ ապահովելու համար սովորական պետական գործողությունները (պարզեցման վճարներ), ինչպիսիք են վիզայի, թույլտվության կամ լիցենզիայի տրամադրումը
- Մի օգտագործեք անձնական միջոցները կամ ուրիշի միջոցները՝ մի բան անելու համար, որը չէիք կարող անել կորպորատիվ միջոցներով, օրինակ՝ գնել անօրինական նվերներ, ինչպիսիք են փողոսկրը, թմրանյութերը կամ սեռական ծառայությունները
